



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

16

ԳԼՈՒԽ ՃԽԸ ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՅ ՊՂԾՈՒԹԵԱՆ

Քահանայ թէ ի պղծութեան գտանիցի, եւ իրքն յայտնեցին, եւ խոստովան ոչ լինիցի, եւ յայտնապէս յանդիմանել ոչ կարեն, ի կամս նորա թողցեն լինել եւ չլինելն եւ յեպիսկոպոսին: Նոյն կանոն եւ սարկաւագացն է: Խրատէ եկեղեցականաց եւ ժողովրդականաց յինքեանս զայնպիսին թողուլ եւ յեպիսկոպոսն, զի նորա են դատաւորք քահանայից եւ սարկաւագաց:

ԳԼՈՒԽ ՃԽԹ ՎԱՍՆ ԹԷ ՔԱՆԻ՞ ԱՄԱՅ ՕՐՀՆԵՆ ԶԵՐԷՅՆ

Կամ եղեւ մեծ ամենայն ժողովոյն, եթէ մինչեւ յերեսուն տարին մի՛ օծցի ի քահանայութիւն, զի փորձեցի եւ եւս ընտրեցի պիղծն ի սրբոյն եւ ի բաց պարգեցի, քանզի եւ տէրն մեր երեսնամեայ էր, յորժամ առ զօծումն մկրտութեան եւ սկսաւ գնոյն օրինակ ուսուցանել ամենեցուն՝ ութօրեայ մկրտիլ, իսկ երեսնամեայ օծանիլ ի քահանայութիւն: Եւ եթէ ոչ ըստ այսմ սահմանի, զոր զպատկառելին եղին օրինակ, գոնեայ ըստ կանոնի սրբոցն արասցեն հայրապետացն Գրիգորիսի եւ Ներսիսի վերջնոց, զի զայս սահման լուծանել արտաքոյ է գրոց դատաստանի:

ԳԼՈՒԽ ՃԾ ՎԱՍՆ ՈՐՔ Ի ՀԱՐԿԷ ԳԱՆ Ի ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Վասն որք ի նեղութիւն անկանիցին եւ կամ ի խիստ հիւանդութիւն, կամ ընթոնեսցին ի բռնաւորաց եւ վասն նեղութեան մկրտեսցին, եւ կամ էր յառաջ քրիստոնեայ եւ գործովք՝ վատթար եւ ապա վասն նեղութեան ի հաւատս կացցէ, գայնալիսին ընդունի եկեղեցին, այլ ոչ կատարելան պէս, զի անկամայութեամբ են հաւատքն: Չայսպիսոյ ասէ Գիր. միթէ ի հո՞ղ խոստովան առնիցի առ քեզ: Եւ այս մարդասիրութիւն ի Տեառնէ ցուցեալ է առական, բայց ըստ դատաստանի է անկատարն:

ԳԼՈՒԽ ԾԾԱ ՎԱՍՆ ԳԱԻԱՌԻ ԵՐԻՑԱՆՑ

Գաւառի երիցունք ի քաղաքի եկեղեցոյ, իբրեւ անդ իցէ եպիսկոպոս կամ երէց քաղաքին, չէ պատշաճ նոցա պատարագ մատուցանել կամ հաց յագապի տալ եւ ոչ բաժանել յեկեղեցոյն: Ապա թէ նոքա շատին ինչ իցեն, եւ կոչիցի՝ յագապի տացէ, այլ շահն զինչ եւ իցէ ի նմին յեկեղեցոյն պահեսցի: Չի թէ արք քաղաքի պատիւ ունին, որչափ եւս առաւել՝ եպիսկոպոսք եւ քահանայք: Եւ թէ նոքա այլոր բաւականեալք իցեն եւ կամ անդ են եւ անպարապք, եւ կոչին, հրամանաւ նոցա արասցեն, եւ շահն յեկեղեցոյն լինել իրաւամբք է:

ԳԼՈՒԽ ԾԾԲ ՎԱՍՆ ՔՈՐԵՊԻՍԿՈՂՈՍԱՅ

Եւ քորեպիսկոպոսք են ըստ օրինակի եւ ըստ կարգի եւթանասնիցն, իբր լծակիցք եւ գործակիցք վասն փրկութեան, որ յաղքատս կատարելոց է: Գաւառի տեսուչ թարգմանի քորեպիսկոպոսն եւ ձեռնադրող է խոնարհագոյն աստիճանաց, որ ի վայր է քահանայութեան: Հակառակ է գրոց դատաստանի եպիսկոպոսաց զարս աշխարհականս քորեպիսկոպոս առնել կամ գտգէտ քահանայ՝ կոփիչ աղքատաց եւ ոչ տեսուչ, զի եւ եպիսկոպոսն տեսուչ թարգմանի, եւ նոքա՝ գործակիցք:

ԳԼՈՒԽ ԾԾԳ ՎԱՍՆ ՊՏՂՈՑ ԵԿԵՂԵՑՈՅ

Որք գպտուղս եկեղեցոյ կամին արտաքս քան զեկեղեցին առնուլ կամ տալ, եւ ոչ կամօք եպիսկոպոսին կամ որ ձեռնադրեաց գայնալիսին յայնպիսի իրս, եւ կամօք նորա չառնիցէ եւ չգործիցէ, նգովեալ լիցի: Լուիցեն զլացողք զեկեղեցիս կամ յինքեանս եւ կամ յայլ ոք տալ եւ զարհուրեսցին: Եւ թէ այսքանեաց նգովք է,

որչափ միանգամայն յափշտակողաց զեկեղեցի միմեանց: Եւ աստ դատաստանաւ է նգովս, զի որ զեկեղեցոյն օտարացոյց զպտուղ, օտարանայ, եւ ինքն յեկեղեցոյ:

ԳԼՈՒԽ ԸԾԴ ՎԱՍՆ ՈՐՔ ԶՈՐԴԻՍ ԹՈՂՈՒՆ ՀԱՐՔ

Որ հարկանեն եւ թողուն զորդիս իւրեանց եւ ոչ սնուցանեն՝ որչափ ձեռնհաս իցեն, եւ ոչ փոյթ առնիցեն վասն Աստուծոյ կարգին եւ սննդեանն, մինչեւ ի պատճառս պահոց եւ վանականութեան արհամարհիցէ եւ անփոյթ առնիցէ, նգովեալ լիցի: Եւ զայս սահման կանոնի թէպէտ եւ յաղագս աղանդոյն կարծենք սաստիւ լինել, որք զանձինս սուրբս քարոզէին եւ բազում նորաձեւութիւնս առնէին, որպէս վասն պտղոյ եկեղեցոյ եւ այլոց, այլ սակայն աստուածային Գրոց հրաման է ըստ կամացն Աստուծոյ սնուցանել զորդիս, զի մի՛ հեռացին յԱստուծոյ օրինացն: Եւ թէպէտ ինքեանք այնորիք կարծին մերձաւոր լինել Աստուծոյ, դատաստանաւ է որոշիւն, զի պատճառք եղեն ծննդոցն հեռանալ ի Տեառնէ:

ԳԼՈՒԽ ԸԾԵ ՎԱՍՆ ՈՐԴՈՅ, ՈՐ ԹՈՂՈՒՆ ԶՀԱՅՐՆ

Եթէ ուրուք որդի, որոյ ծնողն առաւել հաւատացեալ է եւ առաքինի ի կարգս Աստուծոյ, հեռանայցէ ի պատճառս աստուածապաշտութեան եւ արհամարհիցէ եւ զարժանն եւ զիրաւ պատիւ ծնողացն չհատուցանիցէ, նգովեալ լիցի: Ես այսմ դարձեալ յոյժ պատուէր է ի Գրոց, թէպէտ եւ յաղագս ասացեալ աղանդոյն առաւել զգուշացուցանէ, որք ի պատճառս աստուածապաշտութեան արհամարհել զծնողսն տային, յաղագս այնորիկ զառաւելութիւն եղ զհաւատոյ ծնողին: Զի եւ Տէր զխափանիչ աստուածապաշտութեան զծնողսն հրամայեաց թողուլ, այլ նոքա՝ զլաւսն: Յաղագս այնորիկ զնգովսն եղին իրաւացի:

ԳԼՈՒԽ ԸԾԶ ՎԱՍՆ ԿԵՐՈՂԱՅ ԶԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻՆ

Եթէ որ զքառասունսն պահեսցէ սուրբս եւ զատկի հինգշաբաթ օրն քան զհաղորդել օրինացն եւ բաժակին սրբոյ աւելի ինչ համարձակեսցի ուտել, զպահոցն, զոր պահեաց, ընդունայն է եւ ի մեծ ժողովոյս նգովեալ եղիցի: Զայս եւ ի Նիկիայ ժողովն եղին՝ յայնմ ատուր չորակեր լինել սակաւ: Լուիցին Յոյնք եւ

Վիրք գղատաստանս կերողաց զօրն մեծ, զի ոչ Գանգրայն ժողովեալք եւ ոչ Նիկիայն Հայք էին, այլ յամենայն ազգաց, մասն նաւանդ ի Յունաց: Եւ այս դատաստանս անլուծելի է ի վերայ նոցա, զի ոչ յարժանաւոր ժողովոյ լուծաւ, այլ ի խոտորեալ եւ յանարգեալ ժողովոյն Քաղկեդոնի:

ԳԼՈՒԽ ԾԾԷ ՎԱՍՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ՀՆԱԶԱՆԴԻԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Որ յիրաքանչիւր իշխանութեան եպիսկոպոսք իցեն, իմասցին, զի մայրաքաղաքաց եպիսկոպոսն թիկունք է նոցա եւ հոգեբարձու, եւ ամենայն ոք, զինչ եւ պատասխանի կամիցին առնել, առ նա ընթանան՝ եւ թէ մուրհակ արքունի եւ իշխանաց վասն իրաց եկեղեցոյ եւ կարգաց հասարակաց: Վասն այսորիկ կամ եղեւ, թէ պատուով յառաջ իցէ, եւ առանց նորա մի՛ իշխեսցեն գործել ինչ, ըստ նախնեացն սովորութեան հարցն մերոց, որ կարգեալ են կանոնք, բայց միայն զայս իշխեսցեն գործել յիրեանց իշխանութիւնսն՝ եթէ գեղք, եթէ գաւառք, եթէ օծումն քահանայութեան եւ կամ զինչ վարք իցեն իւրոյ գաւառին եւ իշխանութեան, այլ այլոց ամենեկին մի՛ իշխեսցէ գործել ինչ եւ ձեռնամուխ լինել արտաքոյ, քան զկամս մայրաքաղաքի եպիսկոպոսին: Եւ ոչ նմին կաթողիկոսին առանց հաւասարութեան այլոց եպիսկոպոսաց գործել ինչ: Յայտնի է այս հոգեւոր դատաստան եւ բնաւին այժմ լուծեալ: Մի՛ ընդ մեզ զայրասցին յեպիսկոպոսաց, զի ոչ խնդրեն նոքա զարժանիս ձեռնադրել, այլ կան մնան, զի զանձն ուրուք շարժեսցէ ախտ, եւ նոքա՝ զայլ ախտաւորս գաւառին, եւ ընծայական թղթովք ի դիմաց վկայելոցն երթան: Թէպէտ յայտնի է հայրապետաց, զի ո՞րք ի լաւացն յանձնէ յայդոսիկ համարձակեաց, կամօք պատրին: Եւ այդ պատճառ հակառակութեան նոցա ընդդէմ հայրապետաց, զի ոչ ի Տեառնէ կոչեցան եւ ոչ հաւասարութեամբ եպիսկոպոսաց ձեռնադրեցան:

ԳԼՈՒԽ ԾԾԸ ՎԱՍՆ ՈՐ ՅԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԲԱՆԱԴՐԵԱԼ ԵՆ

Եթէ որ յիւրմէ եպիսկոպոսէն անկաւ՝ երեց կամ սարկաւագ, եւ զեպիսկոպոսին գղատաստան յանձին չկալաւ եւ համարձակեցաւ ձանձրացուցանել զլուր ժողովոց բազմաց, որպէս թէ զինչ իրաւունս ունիցի՝ առաջի բազում եպիսկոպոսաց ասասցէ եւ ի նոցանէ զարդար դատաստանի զվճիռն ակն ունիցի

առնուլ: Ապա թէ եւ՛ ի նոցանէ արտնդեցաւ եւ անգոսնեաց, եւ համարձակեցաւ առ թագաւոր դիմել եւ ձանձրացուցանել, զայնպիսիսն մի՛ արժանի առնել թողութեան կամ ընդունելութեան կամ բնաւին յոյս ինչ տալ, զի առ յապալ հաստատիցի ի նոյն տեղի: Արդար է այս դատաստան, զի յետ մի անգամ եւ երկիցս յանդիմանելոյ յանդգնեցաւ: Զի թէ իւրոյ եպիսկոպոսին կարծի նախանձու լինել, միթէ եւ բազմ՝ացն եւս: Այլ ի գղջանալն՝ այդ եւս տեսցին:

ԳԼՈՒԽ ԶԾԹ ՎԱՍՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ՉԶԵՌՆԱԴՐԵԼ ՅԱՅԼՈՅ ՎԻՃԱԿԷ

Մի՛ որ յեպիսկոպոսաց իշխել համարձակեցի յայլմէ իշխանութենէ յայլ մտանել եւ ձեռնադրութիւն առնել յեկեղեցիս եւ մերձեցուցանել զոր յաստիճան, եւ ոչ բազմութեամբ մտանել յայլ իշխանութիւնս, բայց եթէ համարձակելով եւ թողթս տալով՝ որ մայրաքաղաքացն է եւ ոչ ընդ նմա եպիսկոպոսքն են՝ մուտ տայցեն նմա: Ապա թէ ոչ ուրեք կոչեցեալ՝ դիմեսցէ ստահակութեամբ ձեռնադրութիւնս առնել ումեք եւ հաստատութիւն իրաց եկեղեցոյ, որ ոչ բնաւ անկ իցէ նմա, անհաստատ լիցի, որ ի նմանէ արարեալն գտանիցի, եւ նա պարտաւոր լիցի ստահակութեանն իւրում եւ յանմիտ ձեռնադրութենէ զարժանն դատաստան ընկալցի՝ առ ետեղ մերժեցի ի սուրբ ժողովոյն: Ի բազում կանոնս եւ գրեթէ ամենայնս այս եղաւ, զի չար է եւ անկարգութեան պատճառ: Անհաստատ լիցի՝ այսպէս ասէ. զի թէ ի նմանէ ձեռնադրեալն արժանաւոր իցէ, գղջացեալ՝ հաստատեցի օրհնութեամբ պատշաճի յիւրմէ եպիսկոպոսէն, նմանապէս եւ՛ այլ ինչ կարգեալքն, եւ ինքն եւս հաստատեցի՝ ցուցանելով զարժանի ապաշաւս, ապա թէ ոչ՝ մերժեալ լիցի միշտ:

ԳԼՈՒԽ ԶԿ ՎԱՍՆ ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ

Եթէ որ յեպիսկոպոսաց յիւս ինչ յանցուածոց եւ մեղադրութեան դատապարտեցի, եւ ապա դէպ լիցի վասն նորա ոչ միաբանել, որք յիշխանութեան են եպիսկոպոսք, եւ ոմանք ի նոցանէ անպարտ եւ արդար յայտ առնել կամեսցին, եւ ոմանք ի նոցանէ՝ պարտաւորել, զի վախճանեցի ամենայն իրօք հակառակութիւն կեղծաւորութեան, կամ եղեւ սուրբ ժողովոյս, որ մայրաքաղաքաց եպիսկոպոսն է, զի ի մերձաւոր գաւառաց անտի եւ

յիշխանութենէ կոչեսցէ զայլս ոմանս, որ դատեսցեն եւ զհակառակութիւն կեղծատրութեանն ի բաց լուծցեն, զի հաստատուն է՝ յոր ինչ կարգեսցեն, որ ինչ յիշխանութենէ անտի են: Տե՛ս, թէ որքան ստուգիւ հրամայէ դատել կաթողիկոսաց եւ ոչ պատրիկ ի պատճառս ազահութեան եւ թիւրել զճշմարիտ դատաստանս:

ԳԼՈՒԽ ԾԿԱ ՎԱՍՆ ՈՉ ՓՈԽԵԼՈՅ ԶՀԻՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ, ՈՐ ԲԱՐԻՆ Է, ՅԵԿԵՂԵՑՈՅ ՍՐԲՈՅ

Ոչ է պարտ զվաղնշուցն սովորութիւն ի գաւառի եկեղեցեաց նորաձեւել: Զվիճակաց, եւ զաթոռոց, եւ զժողովրդոց ասէ: Եւ թէ փոխեալ յասացելոցդ կամի որ ի հայրապետաց, ժողովօք պարտի առնել, որ է անվտանգ ըստ դատաստանի գրոց:

ԳԼՈՒԽ ԾԿԲ ՎԱՍՆ ՈՉ ՏԱԼ ՅԱՅԼ ԵԿԵՂԵՑԻ ԶԱՅԼ ԵԿԵՂԵՑՈՅ ՆՈՒԷՐ

Ոչ է պարտ զսրբութիւնսն յօրհնութեան կարգի ըստ զատկաց յայլ եկեղեցիս առաքել: Զնշխար տալն յայլ եկեղեցիս խափանէ, զի մի՛ պատճառ ամբոխի լիցի, զի յամենայնսն ուղիղ դատաստանի զգուշանան կանոնք:

ԳԼՈՒԽ ԾԿԳ ՎԱՍՆ ՈՐ ԸՆԴ ԱՅԼԱԶԳԻՍ ԽԱՌՆԱԿԻՆ ԽՆԱՄՈՒԹԵԱՄԲ

Չէ մարթ, որ յեկեղեցոյ մերոյ են, ի պէսպէս եւ ի ցոփ հարսանիս այլազգեաց մերձեցուցանել զուստերս եւ զդստերս իւրեանց, կին տալ նոցա կամ կին առնուլ ի նոցանէ: Դատաստան ըստ կամաց կանոնաց այս լիցի այնպիսեացն. զի թէ ի հեթանոս այլազգաց տան, եւ զրկին ի հաղորդութենէ, զրկեսցին տուողքն ի հաղորդութենէ իւրեանց, եւ եթէ ի հերձուածողս, յոր մեք ոչ հաղորդիմք, զդատաստան խղճին ծնողքն, որ ընդ նոսա ամուսնացուցին, հատուցեն:

ԳԼՈՒԽ ԾԿԴ ՎԱՍՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՈՐ ԶԱՅԼ ԵԿԵՂԵՑԻ ԿՈՂՈՊՏԷ ԵՒ ԶԻՒՐՆ ԶԱՐԴԱՐԷ

Եպիսկոպոս ոք, եթէ իցէ գաւառաց բազմաց եւ ունիցի իշխանութիւն ընդ ձեռամբ իւրով, մի՛ իշխեսցէ յայլոց իշխանութեանց առնուլ ինչ եւ զիւր եկեղեցին զարդարել, զի աշատութեամբ վարեցաւ եւ անձին իւրում դատապարտութեամբ: Այնպիսին, եթէ չհաւանիցի դառնալ յիրացն, ի բաց լուծցի. եւ այն, զոր առ յայլոց եւ շինեաց գեկեղեցին, մի՛ կոչեսցեն զանուն նորա իւրեանց վարդապետ: Յայտնի է այս հոգեւոր դատաստան եւ պահելի հաւաստեալ յեկեղեցի:

ԳԼՈՒԽ ԶԿԵ ՎԱՍՆ ՈՐ Ի ՄԻՏՍ ՈՉ ԻՅԷ ԵՒ ԶԻՒՐՈՎԻՆ ԵՐԹԻՅԷ

Հարցումն. Որ յիւր միտս ոչ իցէ եւ զհիւրովին երթիցէ, այսինքն՝ կամ գահավեժ առնի, կամ այլ ինչ մահու մեռանի, պա՞րտ է ի վերայ պատարագ մատուցանել, թէ ոչ Պատասխանի. Պարտ է վիճակելոյն քննել, եթէ ճշմարտութեամբ պակասամիտ էր եւ արար գայս, քանզի բազում անգամ մերձաւորին ախտացելոյն կամելով դիպել, որ ի վերայ նորա պատարագ մատչի, ստեն եւ ասեն՝ չէր յիւր միտսն, զի մատուցեն զպատարագն: Արդ՝ քննել պարտ է, մի գուցէ ի բռնութենէ մարդկան կամ այլապէս արար գայս, ապա ոչ է պարտ լինել պատարագ ի վերայ նորա, քանզի ինքնասպան եղեւ անձին իւրոյ: Ապա պարտ է քննել զամենայն ճշմարտութեամբ, զի մի՛ ի դատաստան անկանիցի մատուցանողն: Արդ՝ թէպէտ յայտնի է ըստ հարցմանն եւ պատասխանիդ, այլ վերակացութն պարտապան են ապաշխարել ըստ դատելոյ վարդապետաց: Եւ դատաւորաց ոչ է այդ:

ԳԼՈՒԽ ԶԿԶ ՎԱՍՆ ԴԻՒԱՀԱՐ ԿՆՈԶ

Հարցումն. Եթէ ոք կին այսահարիցի յոյժ, որպէս զի երկաթս ազանիցի, եւ այր նորա ասիցէ՝ ոչ կարեն ժուժկալել, եւ կամիցի առնուլ այլ կին, օրէ՞ն է, թէ ոչ: Պատասխանի. Շնութիւն միջնորդի յիրսդ, եւ զինչ՞ պարտ եւ արժան է, ոչ զիտեն վասն այդորիկ: Ըստ ներման եւ գայս գրեցաք երբեմն զդատաստան. որպէս կամ է ընկալցին դատաւորք եւ անպարսաւ զմեզ թողցեն յայդմանէ:

ԳԼՈՒԽ ԶԿԷ ՎԱՍՆ ՈՐ ԱՅՐ ՉԼԻՆԻ

Հարցումն. Եթէ այր ոք ոչ լինիցի ի գործ այրութեան, եւ զկինն ելանէ ի նմանէ, եթէ ոք զկինն գայն կին առնիցէ, ընդ հանե՞ալ կանայսն պարտ է համարել

գայնալիսին, եթէ անխեղճ ունել: Կամ թէ այրն չարձակէ եւ ասէ այնպէս, եթէ՝
ինձ մասն հասեալ է յԱստուծոյ, կաց եւ պաշտեալ զիս, մեք զի՞նչ պատասխանի
տացուք: Պատասխանի. Զէ արժան արձակել եւ ոչ ձեզ թողացուցանել: Եղեալ է
եւ այս դատաստան կանոնական. ներմամբ ի կամս ապաստան է հաճելն ընդ
երկաքանչիւրսն, նմանապէս եւ՝ դատաւորաց եկեղեցոյ:

ԳԼՈՒԽ ԾԿԸ ՎԱՍՆ ՇԱՇՄԵԼՈՅ ԿԱՆԱՆՑ

Հարցումն. եթէ կին ուրուք հաշմիցի եւ ասիցէ ցայր իւր, եթէ՝ ես ահաւասիկ չեմ
արժանի առնակնութեան, արա դու քեզ այլ կին, որ քեզ պիտանի է եւ գտուն քո
շէն կալցի, եւ ինձ ամ ըստ ամէ հաց եւ հանդերձ տուր, եւ ես նստայց առ
եկեղեցոյդ մինչ ի վախճան ժամանակի իմոյ, եւ այրն առնու յանձն առնել
գամենայն, ընդ պատուհասի՞ւ ինչ են իրքն, զի այլ կին առնէ, թէ՞ անվնաս է:
Պատասխանի. Վնասակար է, ոչ կարէ այլ կին առնուլ, որչափ կենդանի իցէ
կինն իւր: Ընտրութեամբ զիջանելով եղաւ այս դատաստան կանխաւ: Ընդ կամս
դատաւորաց եկեղեցոյ եղաք եւ զայսոցիկ ընդունելութիւն, միայն զի ի խղճէ
ճողոպրիցին:

ԳԼՈՒԽ ԾԿԹ ՎԱՍՆ ԱՆԱՄՆԱՊՂԾԱՅ

Հարցումն. Եթէ այր ոք ընդ անասնոյ պղծիցի եւ յետ պղծութեանն գղջանայցէ եւ
ապաշխարիցէ եւ վաստակիցի յօրկանոցի, որպէս եւ հրամայեն վարդապետք, եւ
կին նորա յետ յանցանացն չկամիցի ի կնութեան կալ վասն պղծութեանն, որ եղաւ
ի վերայ նորա, եւ այրն այսպէս ասասցէ, թէ՝ կամ կինն առաջին հաւանեսցի, կամ
այլ կին հրամայիցէք առնել: Պատասխանի. Կինն իշխէ մեկնել, եւ այրն այլ կին
առնուլ: Նշանակեցաւ երբեմն այս դատաստան, այլ այժմ գարբոյս եղաք հրաման
ի լրման այնմ:

ԳԼՈՒԽ ԾԶ ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻ, ԹԷ ՍՊԱՆԱՆԷ ԶՈՔ

Հարցումն. Եթէ ոք ի քահանայից յուղոջ դիպեսցի, եւ աւագակք ի վերայ անկցին,
եւ դէպ լիցի քահանայի սպանանալ գոմանս յաւագակացն եւ զանձն իւր եւ
զընկեր իւր ապրեցուցէ, պա՞րտ է նմա ի կարգի քահանայութեան կալ, թէ ոչ:
Պատասխանի. Չէ արժան կալ ի քահանայութեան, վասն զի ոչ է արժան

քահանայի սպանանել գործ, թէ եւ ինքն մեռցի, այլ եւ ոչ զանասուն: Յաղագս այսմ դատաստանի լուայ, եթէ վասն անձին չէ պարտ սպանանել գործ, այլ վասն ընկերացն լաւ է սպանանել, յորժամ աւագակքն այլագգիք իցեն: Եւ պաշտել զքահանայութիւն կամ ոչ՝ ի դիպուածսն տեսցի ի վարդապետաց:

ԳԼՈՒԽ ՃԶԱ ՎԱՍՆ ԴԻՒԱՀԱՐԱՅ ԵՒ ԱՅԼ ԽՈՒՄԱՐՆՈՒ ՍՊԱՆՄԱՆ

Հարցումն. Եթէ ուրուք ի դիւահարիւն իւրում մարդ սպանեալ առանց զգայութեան իւրում, յորժամ սրբեսցի ի դիւէն, իբրեւ սպանո՞ղ պարտ է ապաշխարել, թէ ո,րպէս: Պատասխանի. Սակաւ ինչ, զի ի չարէն է գործն: Սոյն լիցի եւ յաղագս այլ մտախաբացն: Բայց ըստ հոգեւոր դատաստանի, եթէ ինքեանց վնասիցեն եւ թէ այլոց, առանց ապաշխարութեան մի՛ լիցի տեսողքն: Այլ ըստ մարմնոյ դատաւորաց աստ գործ ոչ է:

ԳԼՈՒԽ ՃԶԲ ՎԱՍՆ ԱՄԼՈՒԹԵԱՆ ԿԱՆԱՆՑ

Հարցումն. Եթէ ոք վասն ամլութեան եթող զկին իւր եւ առնէ կին ծննդական եւ ապաշխարութիւն խնդրէ նովին կնան, զինչ պարտ է առնել: Պատասխանի. Շնացող է: Գրեալ է քննութեամբ եւ այս դատաստան: Այլ դատաւորաց լիցի զսրբոյս մեծարել զհրաման եւ կամ դատելն զկանխաւ, եւ ազատս զմեզ ի բանբասանաց թողուլ: Ներէ եւ այսմ սուրբն Բարսեղ:

ԳԼՈՒԽ ՃԶԳ ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ԱՅԼՈՑ ԱԿԱՄԱՅ ՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ

Հարցումն. Եթէ ոք ի քահանայից սրբէ զանդաստան իւր կամ զպարտեզ եւ քար ընկենու գործովն, եւ դիպի մարդոյ, եւ մեռանի, զինչ պարտի առնել վասն կարգի քահանայութեանն եւ պաշտմանն: Կամ թէ ումեք յաշխարհականաց նոյնպէս ակամայ սպանութիւն դիպի, ո՞րպէս պարտ է տալ ապաշխարութիւն: Պատասխանի. Սպանող է, ապաշխարեսցէ եւ զքահանայութիւն մի՛ պաշտեսցէ: Նմանապէս եւ՝ հայր՝ զորդի եւ այլ այսպիսի, նմանապէս եւ՝ որ ի վարդապետէ վասն խրատու հարեալ է եւ մեռեալ, ըստ սովորութեան: Եւ այսպէս է. սաստիւ

առաքեալ քահանայ զծառայսն զհետ փախուցելոյ ծառային, այլ թէ յամբոխի միջի ձիով ընդ կոռն հարկանէ եւ սպանանէ, ի քահանայութիւն գալ ասէ եւ աստ լուծանէ, կամ զի չէր քահանայ, կամ յամբոխէն եղեւ, ներէ: Նման այսմ եւ զականայ սպանութիւն Օրէնքն ուսուցանեն, որպէս ոստչիւ տապարին, կամ այլ ինչ այսպիսի, զոր յապաստանի, ասէ, անկանել ի քաղաքսն եւ ապրել, որ զերկրորդ մահուն ունի գտեղին: Է կամաւ դարձեալ եւ ականայ, յորժամ նետ որ ձգէ որսոյ, կամ գազանի, կամ ըստ այլոյ օրինակի, եւ պատահի թշնամոյ, յորոյ վերայ խնդայ, խառն է յերկուցն: Յաղագս այնորիկ է դատաստանս թագաւորացն, ի սպանանել այլազգոյ զքրիստոնեայ ականայ իբր զկամաւոր եղաք զդատաստան, զի բնութեամբ է խնդալ նոցա ի կորստեան մերում: Եւ արդ, քանզի արժան է զականայ սպանութիւն խոստովանեալ՝ ըստ կանոնական ուղղել դատաստանի, եւ ի ձեռս անկեալ դատաւորացն՝ ճշգրիտ դատել զականայ եւ զկամայ եւ որ յերկուցն է եւ այնպէս գտուծան ուղղել: Այլ զկատարեալ կամայն եւ զականայն ի կանոնաց ուսցիս ի Բարսղի սրբոյն: